

ստոյգ եւ ճշգրիտ ծանօթութիւնը ստանալ, պէտք չէ ուրիշն այնքան հեռուներն ածել մեր հայեացը, այլ հարկ է մեզ սահմանափակել հետազոտութիւննիս մեր արեգակնային գրութեան մէջ. Ենչքան աւելի ուղեմք թուփանցել բնութեան գաղտնեացը, այնքան պէտք եմք սեղմել մեր զննութեանց սահմանը եւ աւելի մօտեն զմեզ շրջապատող առարկայից քննութեամբն զրադիլ. եւ արեգականց եւ մոլորակաց լնդհանուր ծանօթութենէն, տասիձանաբար իջնել մեր յատուկ մոլորակին, մեր իսկբնակած Նրկրին ծանօթութեանը, որ տակաւին կարհամարհէ մեր բոլոր խուզարկութեանց եւ բոլոր ճգանց կարողութիւնը, որ տակաւին զաղտնիքներ ունի մեզ անձանօթ եւ ի թագստի պահած, որ մարդկային իմացական կարողութեանը հետ իրրեւ խաղալիք խազալի, կյայանէ սակայն լնդհանուր էից պատճառ եւ ոկիզըն Արտրչապետին անհասանելի կարողութիւնը եւ անչափելի իմաստութիւնը, որ հաստեր եւ հաստատեր է այդ աշագին աշխարհներն, իւրաքանչիւրն յիւրում տեղւոջ, սահման դնելով նոցայանցանել անգր:

Գանք արդ տեսնել թէ ի՞նչ է մեր արեգակնային գրութիւնը եւ ի՞նչ տեսակ աշխարհներէ կը աղկանայ:

(Յ-Ռ-Ռ-Ն-Ա-Լ-Վ-Վ) :

ՆԻԿ. ԱՐ. ԹԻՒԼ.ՊԵՂԱՑԵԱՆՑ.

ԱԿՏԲՈՒՆՅԻՑ ԲՈՒՍԱԾԱՆԱԽԹԵԱՆ.

(Յ-Ռ-Ռ-Ն-Ա-Լ-Վ-Վ-Վ-Վ)

ԲՈՅԱՐԻ ԲԵՎԱՄՆԱԿՈՐՈՒՄՆ.

Մենք արդէն զիտենք, որ ծաղկաբեր և անձաղիկ բայսերը տարբեր կերպով են բազմանում, առաջինները — սերժերով, երկրորդները — սպօրաններով (շորա) :

Մերմ առաջացնելու համար առէքներն և վարսանդներն են ծառայում: Առէքների ամենաէկան մասը փոշանօթն է ներկայացնում, փոշանօթը՝ երկրնանի, երկըլթակաւոր գործարան է, և փոխինդի մանը հատիկներով է լցուած:

Փոշանօթը՝ զարգացման առաջի աստիճանի ժամանակ երկրլթակաւոր մարմին է ներկայացնում և երկու րլթակների կենարոնի մէջ ընդերկայնութեամբ առանձին խորշերի կարգեր են դաւանում: Եւրաքանչիւր

առանձին մայրական խորշերի բաղադրութիւնը՝ չորս մասի է բաժանվում և փոխինդի չորս հատիկ է կազմում։ Փոխինդի հատիկները առաջուց շրջափակւում են մի թաղանթով, յետոյ երկրորդ թաղանթով և վերջը մայրական խորշից ազատում են և ազատ մնում են փոշանօթի դատարկութեան մէջ։

Երբ փոշանօթը հասնում է, շուտով բացւում է (շատ բոյսերին՝ ընդերկայնութեամբ դէպի վարսանդը ուղղուած ճեղքերով) և փոխինդը թափւում է։ Փոխինդի հատիկները սովորաբար գնդաձե են և կամ կլոր բութ անկիւններով։ Իւրաքանչիւր հատիկ երկու թաղանթից և նորա մէջ բաղադրութիւնից — պրօտօպլասմայից է բաղկացած։ Երբ հատիկը ընկնում է սպիի մակերեղյթի վերայ, նորա (հատիկի) ներսի թաղանթը խողովակաձե երկարում է, արտաքին թաղանթի ճեղքի միջով անցնում է, վարսանդի սոնակով ցածանում է դէպի բողբոջի դատարկութիւնը և ձուիկին է հասնում։

Վարսանդը՝ ինչպէս մենք տեսանք մի կամ մի քանի պտղատերեիկներիցն է բաղկացած։ Նորա գլխաւոր նպատակը՝ իւր դատարկութեան մէջ՝ ձուիկներ առաջացնելն է, որոնք փոխինդի պրօտօպլասմայով բեղմնաւորուելուց յետոյ սերմեր են գառնում։

Չուիկները սովորաբար կազմուում են պտղատերեիկների ափերի վերայ, այդ ափերը սպնդանման հաստ են լինում և աղտ կամ ծին (սեմյասեպ) են անուանուում։ այդ աղտի վերայ սովորաբար իւրաքանչիւր ձուիկ կպած է լինում կարճ կամ աւելի երկար կոթով, որին պորտաթել (հիմ—սեմյանոյկա—funiculus) են կոչում։

Աղտի գրութիւնը՝ վարսանդի կազմութիւնից կախումն ունի։ Եթէ վարսանդը մի պտղատերեիկներից է բաղկացած (ոլոռն), աղտը՝ բողբոջի դատարկութեան պատերի վերայ է գտանուում։ Եթէ երկու կամ աւելի շատ պտղատերեիկներ միայն ափերով են միանում, բողբոջի ներսը կառաջանան այնքան ընգերկայնութեամբ աղտեր, որքան էլ որ պլազմատերեիկներն են։ Քայլց եթէ պտղատերեիկների ափերը այնքան ներս են ծալում, որ բողբոջի մինչև կենտրոնն հասնելով երկու կամ աւելի բներ են կազմում, այդ դէպքում ձուիկները կամ վարսանդի առանցքի վերայ են նստած լինում և կամ այդ առանցքից դուրս եկած աղտերի վերայ։

Սպին գտանուում է սոնակի ծայրում կամ նրա ծայրի ափի վերայ և կամ եթէ սոնակը բացակայ է ուղղակի բողբոջի վերայ։ Սպին մաշկով ծածկուած չէ լինում, որը փոխինդի անցնելուն կարող էր արգելք լինել։ Սպին շատ անգամ բաղկացած է լինում կամ կարճ, փիրուն, մածուցիկ, հեղուկ արտաթորող խորշերից (մածուցիկ հեղուկը՝ իւր վերայ թափուած փոխինդի հատիկները պահումէ, և նոցա խողովակների աճմանը նպաստումէ,) և կամ երկար, մազիկների խուրճ կազմող խորշերից (մազիկների մէջ փոխինդի հատիկները մնում են)։

Չուի կը՝ փոքրիկ մարմին է, նստած է բռղբաջի մէջ, և բեղմնաւորումից յետոյ սերմ է գառնում: Բողբօջի մէջ լինում են մի կամ երկու կամ մի քանի և կամ շատ ձուիկներ: Եթէ ձուիկները մինից աւելի են՝ բեղմնաւորումից յետոյ կամ բոլորն էլ սերմ են գառնում կամ մի քանիսը և կամ մի ձուիկը:

Սկզբաւմ՝ ձուիկը բաղկացած է գնդակից (միջուկից) որը աղտի վերայ ամենափոքր բլրակ է ներկայացնում: այդ բլրակը կազմուած է լինում միատեսակ մանր խորչային անկուածից: Յետոյ գնդակի հիմքի չորս կողմը գլանակ է երեսւմ: որը աճելով հետզհետէ բարձրանում է և գնդակի շուրջը ծածկոյթ է առաջացնում և համարեա բոլորովին նորան ամփոփում է և միայն ծայրում թողում է փոքրիկ խողովակ կամ ծակ, որին սերմ նադուռն (սեմիանու) են կոչում: Մի քանի տեսակ բոյսերինը ձուիկը այդպէս մի ծածկոյթով է մնում և ասւում է մի ածածկոյթ առաջ առաջ (однопокровное): Բայց շատ բոյսերինը առաջի ծածկոյթի հիմքում գրսից երկրորդ գլանակն է առաջանում, որը նոյն կերպով աճելով երկրորդ արտաքին ծածկոյթ է կազմում: Պաղատերեների ափից՝ աղտի միջով անօթային թելանման խրձեր են անցնում գեպի ձուիկը մինչև գնդակի հիմքը, այդ խրձերի միջով է կատարուում ձուիկի՝ ուրեմն և սերմի սնունդն:

Գնդակի առանցքի մի մասի մէջ, սերմնադռան մօտ, խորշերից մինը աւելի է աճում քան միւս շրջափակեալ խորշերը և պրօտօպլասմայի լցուած պարկի ձեւ է ստանում, որին սերմ նազար կ (зародышевый мезиокъ) են անուանում: Այդ պարկի վերի ծայրում պրօտօպլասմայի փոքրիկ գունդ (մերկ խորշ) կարելի է նկատել, որին սերմ նազար փուշտիկ (зародышевый пузырекъ) են ասում: Փոխնդային խողովակները ձուիկի գնդակին կպչելուց յետոյ, սերմնափամիկուշտիկը թաղանթ է ստանում և խսկական խորշի է փոխուում: Այդ խորշը նոր խորշերի է բաժանւում և թելի սկիզբն է լինում, որի ծայրը սաղմ է դառնում:

Սաղմի զարգանալու միջոցին սերմնափամիկուշտիկի մէջ շատ անգամ առատ անկուած է կազմում, որը ի վերջոյ պատրաստ սաղմն է շրջափակում և սպիտակ կուցն է ձեւացնում: Եթէ այդ անկուածը չի կազմում, սերմը առանց սպիտակուցի է մնում:

Թէպէտե առէչքները և վարսանդը շատ անգամ մի և նոյն ծաղկի վերայ են լինում, բայց գորանից չպիտի եղրակացնել, որ վարսանդը անզատձառ բեղմնաւորուում է մի և նոյն ծաղկի առէչքներով: Ընդհակառակն շատ փորձեր և հետազօտութիւններ ցոյց են տուել, որ վարսանդները՝ մի և նոյն բոյսի միւս ծաղիկների փոխնդով են մեծաւ մասմբ բեղմնաւորուում:

Մի քանի տեսակ բոյսերի (կաղնի, տիկի) մի ծաղիկների մէջ միայն առէչքներ են գտնուում, խսկ միւնոյն բոյսի միւս ծաղիկների մէջ

միմիայն վարսանդներ լինում, Կան բոյսեր (ուռիներ), որոց առէք-քաւոր ծաղիկները մի անհատի վերայ են կազմում, իսկ վարսանդաւոր ծաղիկները միւս անհատի: Ըստ բոյսերի միւնոյն ծաղկի մէջ գտնուած առէքները և վարսանդները զանազան ժամանակ են զարգանում: Վեր-ջապէս կան և այնպիսի բոյսեր, որոց առէքները և վարսանդները միւնոյն ծաղկի մէջ են լինում և միւնոյն ժամանակ էլ զարգանում են, բայց նոքա ծաղկի մէջ այնպէս են դասաւորուած, որ առէքների փոխինդը չի կարողանում թափուիլ միւնոյն ծաղկի վարսանդի սպիի վերայ: Հաստատ յայտնի է որ եթէ վարսանդը բեղմնաւորուումէ այլ ծաղկի փոխինդով և կամ միւնոյն տեսակ բոյսի միւս անհատի փոխին-դով աւելի շատ և աւելի խոշոր սերմեր է տալիս, որոնք աճելով աւելի առողջ բոյսեր են դառնում: Քան թէ այն ժամանակ երբ վարսանդը իւր ծաղկի փոխինդով է բեղմնաւորուում: Ըստ հետազոտութիւններ ցոյց են տուել որ ծաղկի իւրաքանչիւր մասերի ինքնակերպ կազմու-թիւնները, գունաւորելն, հոտը, անուշ արտաթորուած հիւմերը և այլ հրապուրանքները այլ և ծաղկի մասերի միմեանց յարաբերութիւնները, և նոցա միջատների ձեւերին և սովորութիւններին յարմարուելն, բոլորն էլ մի նպատակի են ծառայում, այն է միւնոյն ծաղկի մէջ բեղմնաւոր-ման արգելք լինել և միւնոյն բոյսի զանազան ծաղիկների բեղմնաւոր-մանը նպաստել: Այդ տեսակ բեղմնաւորումանը խաչաձև (պերեստ-հակ) են անուանում:

Բեղմնաւորման ձեւի յարաբերութեամբ ծակատու բոյսերը կարելի է երկու խումբի բաժանել, առաջիներինը փոխինդը՝ քամու օգնականու-թեամբ է թափուում վարսանդի վերայ, երկրորդներինը միջատների օգ-նականութեամբ:

Քամու օգնականութեամբ բեղմնաւորուղ բոյսերի առէքները և վար-սանդները զետեղուած են լինուն սովորաբար զանազան ծաղիկների մէջ կամ զանազան անհատների մէջ: Նոցա ծաղիկները պայծառ գոյն չեն ունենում, հոտից ևս զրկուած են և շաքարային հեղուկ չեն արտա-թորում: Նոցա սպիները փոխինդ ըմբռնելու համար մազիկներով են ծածկուած, մի քանիսների (ուսի, կազնի, կաղամախի) առէքները ծաղկից քաշ են ընկնում, փոխինդը շատ առատ է լինում: Թողի նման չոր և բարակ:

Խոկ միջատների օգնականութեամբ բեղմնաւորուղ բոյսերի մէջ՝ մի-ջատներին զրաւելու համար շատ զանազան տեսակ յարմարութիւններ ենք գտնաւում: Որով վարսանդի փոխինդով բեղմնաւորումն այլ ծաղկից կամ անհատից ապահովումէ:

Պսակաթերթերի պայծառ գոյնը և ձեւը, ծաղկի հոտը, արտաթորուած քաղցր հիւթը — այս բոլորն էլ միջատներին զրաւում են: Դիշեր ժա-մանակ ծաղկւող բոյսերը սովորաբար մատակարարուած են լինում խո-չոր սպիտակ պսակներով և հոտաւետ ծաղիկներով՝ գիշերուայ թիթեռ-

Ներին հրապուրելու համար. մի քանի ծաղիկներ թէ հոտով և թէ գոյ-
նով հին մսի նման են լինում, ձանձերը հաւաքւումեն նոցա վերայ,
ածում են ձուաներ և փոխնդով բեռնաւորուելով, միւս ծաղիկների
վերայ են թռչում. Պասկը քաղցր հիւթ է արտաթորում սովորաբար
իւր հիմքում, միջատը ստիպուած է լինում ծաղկի մէջ ներս մտնել այդ
քաղցր հիւթը ծծելու համար և այդ ժամանակ նա անշուշտ իւր մար-
մնոյ մաղիկներով փոխինդ է դուրս տանում.

Сама мағымбетің жарылар орталығынан бар көңіл анықтауда, ортадағы ғылыми-
мәдениет орталығынан да арғыбылғауда көңіл көңіл анықтауда, ортадағы ғылыми-
мәдениет орталығынан да арғыбылғауда көңіл көңіл анықтауда, ортадағы ғылыми-
мәдениет орталығынан да арғыбылғауда көңіл көңіл анықтауда, ортадағы ғылыми-
мәдениет орталығынан да арғыбылғауда көңіл көңіл анықтауда, ортадағы ғылыми-

Նախածաղիկը երկու տեսակ ծաղիկներ ունի, որոնք ոչ մի ժամանակ մի և նոյն բայսի վերայ չեն լինում: Մի տեսակ ծաղիկների առէջները՝ պսակի խողովակի մէջ, խորը և վարն են գտանուում, իսկ սպին վերն է գտանուում: միւս տեսակ ծաղիկների առէջները՝ ընդհակառակն պսակի խողովակի ամենավերի ծայրն են գտանուում, իսկ սպին ամենավարը, երկու տեսակ ծաղիկների մէջ ևս քաղցր հիմքը պսակի յատակի վերայ է արտաթորուում: Երբ մեղրաձանձը կարծ վարսանգով ծաղկի մէջն է մանում, նա իւր կնճիթը պսակի յատակի վերայ է ցածացնում և ծաղկից դուրս թռչելով իւր հետ կնճիթի հիմքով փոխինդ է տանում: Եւ եթէ սորանից յետոյ, նա կրկին կարծ վարսանգով ծաղկի վերայ է նստում, բեղմնաւորել չի կարողանում այլ կրկին նոր փոխինդ է հետը դուրս տանում: Իսկ երկար վարսանգով ծաղկի մէջ նստելով մեղրաձանձը պիտի փոխինդը անշուշտ թռղնի նորա սպիի վերայ, որովհետեւ սպին վերն է գտանուում: Իսկ եթէ առաջուց մեղրաձանձը երկայն վարսանգով ծաղկի վերայ է նստում հակառակն է պատահում, նա իւր հետ կնճիթի ծայրով փոխինդ է վերցնում և այնուհետեւ նստելով կարծ վարսանգով ծաղկի վերայ, թռղ-

Հասարակ խոլորձի (обыкновенный ятрышникъ) фոշանօթը սպիտի վերից են լինում, իսկ սպիտ շրթունքի սկզբում, շրթունքը երկար խողովականման է շարունակում և լցուած է լինում մեղրով. Փոշանօթը երկու մասով է մատակարարուած, ընդերկայնութեան ձեղքերով պատռուած է, որոց մէջ փոխնդի գնդեր են գտանւում, Այդ գնդերը ասեղով շատ հեշտ հանւում են.

Իւրաքանչիւր փոխնդագունդ բաղկացած է հաստ սեպիկից, վարը փոքրիկ բարակ ոտիկով, իսկ ոտիկի ծայրում կպած է մածուցիկ նիւթից բաղկացած փոքրիկ գնդակ, որին մածնիկ (որովայշ) են կոչում, Մեղրաձանձը մեղր որոնելով կպչումէ իւր գլխով փոշանօթին, մածնիկները մեղրաձանձի ճակատին են կպչում, այնպէս որ նա (մեղրաձանձը) իւր ճակատի վերայ ուղղչայեաց կպած փոխնդի գնդերով

թուշումէ, Քանի որ փոխնդի գնդերը այդ դրութեամբ են մնում նորածղիկների սպիներին չեն կազում, երբ մեղրաճանճը նոցա վերայ նըստումէ, Բայց մածնիկները փոքր առ փոքր կծկում են, փոխնդագնդերը թերւում և հօրիզոնական դրութիւն են ստանում, այնպէս որ եթէ այդ միջոցին մեղրաճանճը խոլորձի ծաղկի վերայ նստի, փոխնդի գնդերը կարողանում են հասնել սպինին, Սպին շատ մածուցիկ է, այնպէս որ բոլոր փոխնդագնդերը և կամ նոցա մի մասը մեղրաճանճի գլխից մընում է սպիի վերայ և ծաղիկը բեղմնաւորւումէ:

Մեղրաճանճի գլխի վերայ կպած փոխնդագնդերի դրութեան փոփոխութիւնները, երբեմն այնքան ժամանակ են պահանջում, որ մեղրաճանճին յաջողումէ մի և նոյն բոյսի (որից ստացել է փոխինդը) բոլոր ծաղիկները այցելել և թուշել միւս բոյսերի ծաղիկների վերայ:

ՊՏՈՒՅ.

Վարսանդի վերայ փոխինդ թափուելուց յետոյ, ծաղիկը շուտով թառամումէ, Ըրջածաղիկը և առեջքները մեծաւ մասամբ չորանում և թափում են, սոնակը և սպին ևս չորանում են, իսկ բողբոջը ձուփկներով փոքր առ փոքր սկսումէ մեծանալ և պտուղի փոխուիլը Բողբոջը շրջապատեան (օկոլովլունիկ) է գառնում, իսկ ձուփկները սերմեր, Բայց երբեմն շրջապատեան կաղմելու համար ծաղկի միւս մասերն (ընդունաբան, բաժանակ) ևս մասնակցում են:

Պտուղի ձեւը և կաղմութիւնը պիտի ուղղակի կախումն ունենան այն բողբոջի ձեից և կաղմութիւնից, որից պտուղն է առաջացել, Այդ այդպէս էլ լինումէ, բայց բողբոջը պտուղի փոխուելով, այն տեսակ փոփոխութիւնների է ենթարկուում, որոնք նորան առաջուայ դրութիւնից բոլորովին հեռացնում են:

Պտուղի պատը կամ շրջապատեանը մեծաւ մասամբ երկը մասից է բաղկացած լինում: Ալորի կամ լորու պտուղների ներսը նուրբ և հարթ մաշկ է նկատուում, որը բոլոր շրջապատեանը ներսից ծածկում է, այդ մաշկը ներքնապատեան (պարագաներունիկ) է ասւում, դրսից ևս մաշկ է գտանուում, որին մակապատեան (նարույնունիկ) են կոչում, իսկ այդ երկու մաշկի մէջ գտնուած կակուղ մասին՝ միջնապատեան (մաշկունիկ) են անուանում: Սալորի և կերասի մակապատեանը, այն բարակ մասն է ներկայացնում, որը դիւրին գլուխում է, սորա տակ գտնուած հաստ մասից հիմքը՝ միջնապատեանն է ներկայացնում, իսկ ներսի փայտեայ, կոշտ կորիզը՝ ներքնապատեանն է ներկայացնում:

Պտուղը հասնելուց յետոյ կամ վար է ընկնում և փակուվ իւր միջից սերմեր է գուրս թափում և կամ այդ նպատակի համար զանազան կերպով ձեղքում է (ատամնաձև փեղկերով, ծակոտիկներով, խուփով

կամ ճեղքով): Արեմն պտուղները կարելի է երկու տեսակի բաժանել՝ առաջնայի պտուղներ (плоды нераскрывающиеся) և առաջնայի պտուղներ (плоды раскрывающиеся).

11. 0.25% + 7.75 = 7.95%

U.S. GOVERNMENT PRINTING OFFICE 1937 6-1254

- 1) Հ ա տ ի կ (зерновка): Միասնական է , շրջապատեանը մի հատ սերմի հետ է միանում (ար մտիք).
 - 2) Ս ե ր մ ի կ (съмянка): Պառուղը միասնական է , շրջապատեանը չէ միանում սերմի հետ , զիւրին է գլջւռում (բազմածաղիկներ).
 - 3) Բ ա ր դ ս ե ր մ ի կ (сложная съмянка): Երկու կամ մի քանի սերմիկների հաւաքածու է . (ստեղղին — գազար — морковь).
 - 4) Թ ե ւ ու կ (крылатка): Սերմիկ է , որի շրջապատեանը թեւի նման բարակ շրջաթաղանթ է կազմում :
 - 5) Կ ր կ ն ա թ ե ւ ու կ (двойная крылатка): Թեւուկ է երկու թաղանթով (հացի — кленъ).
 - 6) Կ ա ղ ի ն (желудь): Միասնական պտուղ է , փայտեայ կամ կաշուէ շրջապատեանով , իւր հիմքում մատակարարուած է թեփաձեւ կամ տերեւաձեւ ծաղկակալներով : Առաջանում է վարի բազմաբնանի բողբոջից , բների և սերմնապտուկների չափելուցը : Բուն կաղին (желудь собственно): Կաշուէ շրջապատեանով է և անթիւ թեփաձեւ ծաղկակալներից բաղկացած խօզակով (կաղնի ծառ) : Կ ա ղ ն ա պ տ ու ղ կամ տիկիլ (օքիչ): Միասնական պտուղ է , փայտեայ շրջապատեանով և մի քանի սերեւաձեւ ծաղկակալներով (տիկիլ , օքищникъ)

Բ. Հրզութեանը բարձր է երկու գլուխութեց. Անգլիա՝
Գոյածեա, Լուսուր. Երանեալն, Անգլիա է առաջնական և առաջ-
պատճեան է բարձր համար.

- 7) Միքա (կոտյակ): Միասներմ պտուղ է, ներքնապատեանը կորիզ է կազմում, իսկ միջնապատեանը հիւթալի կամ հաստ և թելաձև միջուկ (դեղձ, կեռաս, սալոր, նուշ):

- 8) **Կ ա ձ և մի ր դ** (оръхообразная kostянка), **կորիզն՝ երկու մասի**
դիւրին է ձեղբուռմ, իսկ խոռոչն (полость) **անկատար միջնորմով եր-**
կու մասի է բաժանուած (**ընկուղենի, грѣцкій орѣхъ**).

9. *L*₁*R*₂-*T*₁-*T*₂-*N*₁ *C*₁-*R*₁-*L*₂ + *L*₁-*C*₂, *C*₂*R*₂ *L*₂-*C*₁

- 9) Հատապտուղ (յացա), բազմատերմ պտուղեւ, ներքնապատեանը և միջնապատեանը հիւթալից են և միջուկ են կազմում, որի մեջ սերմերն են ընկդմած (չաղաքի, խաղող)։

10) Պարմապտուղ (тыквина): Բազմասերմ, եռաբնանի պտուղ է, ներքնապտեանը հիւթալից է, և միջնապտեանը մսալից (սեխ, վարունգ):

11) Նարնջապտուղ (гесперидий): Բազմասերմ և բազմաբնանի պտուղ է, շրջապտեանը բազկացած է արտաքին հաստ և փափռեկ կաշուից, իսկ բները՝ խոշոր և հիւթալից խորշերով են լցուած (լիմոնի, նարինջենի)

12) Խնձորապտուղ (яблоко): Բազմասերմ, բազմաբնանի պտուղ է, շրջապտեանը մսալից է, ներքնապտեանը մաշկեայ ընդունարանի չետ միացած՝ ստորին բողբոջիցն է առաջանում (խնձորենի, տանձենի, սերկեիլի):

Բ. ՀԵՂԱՎՈՐ ՊԼԱՆՆԵՐ.

13) Տիռչկ (штучекъ): Միաբնանի, միասերմ պտուղ է, բացւում է ընդլայնութեան ձեղբով, ստորին բողբոջիցն է առաջանում:

14) Պարուտակ (листовка): Միաբնանի, բազմասերմ պտուղ է, շրջապտեանը կաշեայ է և բարակ, փորի կարի ուղղութեամբ է ձեղբում, վերին բողբոջիցն է առաջ գալիս (սոսան):

15) Բարդարուտակ (сложная листовка): Ազատ պարուտակների շաւաքածու է (վաղենիկ):

16) Տուփ (кузовокъ): Միաբնանի, բազմասերմ պտուղ է, կաշուէ շրջապտեանը խուփով է բացւում, վերին բողբոջիցն է առաջանում (բանդ, ճելեն):

17) Ունգ (бобъ): Միաբնանի, բազմասերմ պտուղ է, կաշուէ շրջապտեանը երկու կարերի ուղղութեամբ երկփեղի է ձեղբում: Վերին բողբոջիցն է առաջանում (ոլոսն, լորի):

18) Պատիճ (стручекъ): Երկբնանի, բազմասերմ պտուղ է, երկփեղի է ձեղբում, փեղկերը բեկլում են միջնորմի ծայրերի մօտ (շահպրակ, желтофиль):

19) Սերմնարան (коробочка): Բազմասերմ, բազմաբնանի պտուղ է, կատարեալ կամ անկատար միջնորմներով, բացւումէ ատամներով, փեղկերով կամ ծակոտիկներով (միատեսակ — գվоздика, կակաչ — տօլուան):

Ինչպէս որ ծաղիկները ծաղկափթթութիւն են կազմում, նյուպէս և պտուղները պտղաբերութիւն (соплодиев) կարող են կազմել: Մեծաւ մասամբ պտղաբերութիւնները, ոչ մի բանով ել՝ չեն զանազանուում ծաղկափթթութիւններից, որոնցից նոքա առաջանում են. բայց մի բանիւների բողբոջները՝ պտուղներ դառնալով հանդիպում են միմեանց և շատ անգամ միանում են. Ինչպէս օրինակ վերցնենք արքայ ախնձորը (ананасъ), նորա ծաղիկները բաւական մանր են, և պինդ հասկերով հաւաքուած են: Այդ ծաղիկներից առաջացած հատապտուղները,

միմեանց հետ միանում են, և ծաղկափթթութեան կոթը մսալից է դառնում Երկրորդ օրինակ կարելի է բերել թուզը (вишня ягода). Ծաղենոյ ընդհանուր ծաղկակոթը փքւումէ և ներսից դատարկ տանձի ձեւ է ստանում : Այդ դատարկութեան դուռը բաւականին նեղ է, ներսը բոլոր մակերեսյթի վերայ բազմաթիւ մանր ծաղիկներ են նստած, դոցա բողբոջներից չոր փոքրիկ պառզներ են առաջանում, որոնք փքւած ծաղկակոթի մսալից զանգուածի մէջ ընկղմած մնում են : Այս տեսակ պաղարերութիւնները պտղակուածի մէջ (сборные плоды) են անուանում :

Ծաղկի և պտուղի գլխաւոր նպատակն է, սերմ առաջացնել և նորա աճման միջոցին պահպանել նորան : Սերմի կազմութեան հետ մենք արդէն ծանօթացանք, և գիտենք որ նորա գլխաւոր մասը սաղմն է, որը շատ անգամ սպիտակուցով է շրջափակուած և առանձին մաշկով էլ պատած է : Մենք գիտենք որ սաղմը բաղկացած է պտուկներից, շաքիլներից, ցողնուկից և արմատիկից : Մենք տեսանք որ սաղմից բոլոր բոյսն է առաջանում իւր արմատներով, ցողուններով, ճիւղերով, տերեններով և ծաղիկներով և ծաղիկներով և ի վերջոյ նդյնանման սաղմն է առաջանում : Սերմերի վերայ շատ անգամ կարելի է նկատել զանազան տեսակ յարմարեցումներ, որոնք նոցա աճմանը նպաստում են : Ըստ սերմերի մաշկը բարակ թեւուկի ձև են ստանում (փճու - օօչնա սերմը), միւսներինը մազիկներով պատած են լինում (բամբկենի - խլոպчатникъ) և կամ փունջ փունջ, բայց որոշեալ տեղերի վերայ (ուռի): Մի քանի սերմեր խոնաւութիւնից մածուցիկ յատկութիւն են ստանում և դորա համար գետնին են կպչում, երբ աճելու համար՝ յարմար տեղ են ընկնում (կոտեմ — крессъ): Կան սերմեր, որոնք իւրեանց պայծառ գոյներով (օրինակ տաք երկրների թիթուան բոյսերը) կամ իւրեանց հիւթալի մաշկով (նուռը — гранатъ) թռչուններին հրապուրում են :

(Շաբանավելի) .

Գ. Տ. Գ.